

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒԿՐԱԽՆԱՅԻ
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՂՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը եւ Ուկրաինայի գլխավոր դատախազությունը, այսուհետ՝ Կողմեր,

- կարելուրելով հանցավորության դեմ պայքարում համագործակցության ամրապնդումը.

- հիմնվելով միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերի վրա,

- ելնելով քրեաիրավական ոլորտի այն միջազգային պայմանագրերի դրույթներից, որոնց մասնակիցն են հանդիսանում Կողմերը,

- ձգտելով բարձրացնել քրեական գործերով փոխադարձ իրավական օգնություն ցույց տալու բնագավառում համագործակցության արդյունավետությունը,

պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Կողմերն իրենց ընձեռնված լիազորությունների սահմաններում կիրականացնեն փոխհամագործակցություն՝ սույն Համաձայնագրին, ազգային օրենսդրությանը եւ այն միջազգային պայմանագրերին համապատասխան, որոնց մասնակիցներն են Կողմերի պետությունները:

Հոդված 2

Սույն Համաձայնագրի իրականացման նպատակով Կողմերն իրենց իրավասության սահմաններում պարտավորվում են մյուս Կողմի խնդրանքով կամ սեփական նախաձեռնությամբ ցուցաբերել փոխադարձ օգնություն եւ համագործակցել հետեւյալ հարցերով՝

- դատախազական-քննչական գործունեության նյութերի փոխանակում,

- նյութերի տրամադրում, որոնք կարող են հիմք հանդիսանալ քրեական գործ հարուցելու համար,

- հանցագործությունների եւ դրանք կատարողների մասին տեղեկությունների, ինչպես նաեւ հանցավորության վիճակի եւ միտումների վերաբերյալ տվյալների տրամադրում,

- գործող ազգային օրենսդրության, հանցավորության դեմ պայքարի ոլորտում իրավապահ մարմինների գործունեության համակարգման վերաբերյալ տեղեկատվության փոխանակում,

- դատախազական-քննչական կադրերի պատրաստում եւ որակավորման բարձրացում, նրանց գիտական, մեթոդական եւ տեղեկատվական ապահովում,

- այլ ձեւերով, որոնք չեն հակասում նրանց պետությունների ազգային օրենսդրությանը եւ այն միջազգային պայմանագրերի դրույթներին, որոնց մասնակիցներն են հանդիսանում այդ պետությունները:

Հոդված 3

Սույն Համաձայնագրի նպատակների համար Կողմերը միմյանց հետ հաղորդակցվում են անմիջականորեն, եթե միջազգային պայմանագրերով, որոնց մասնակիցներ են հանդիսանում Կողմերը, այլ կարգ նախատեսված չէ:

Հոդված 4

Սույն Համաձայնագրի շրջանակներում փոխադարձ հաղորդակցությունների ժամանակ Կողմերն օգտագործում են իրենց պետական լեզուն՝ պարտադիր ռուսերեն թարգմանությամբ, կամ ռուսերենը:

Հոդված 5

Համաձայնագրի շրջանակներում աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ խնդրանքները եւ օգնություն ցուցաբերելու վերաբերյալ հարցումները կազմվում են գրավոր, ստորագրվում են իրավասու անձի կողմից եւ ամրագրվում հայցող Կողմի գլխանշանային կնիքով:

Անհետաձգելի դեպքերում խնդրանքները եւ հարցումները կարող են ուղարկվել ֆաքսիմիլային կապի ուղիներով կամ էլեկտրոնային փոստով դրանց հետագա գրավոր հաստատմամբ:

Հոդված 6

Կողմերը կձեռնարկեն բոլոր հնարավոր միջոցները, որպեսզի աջակցեն իրավական օգնություն ցուցաբերելու վերաբերյալ միմյանց հարցումների կատարմանը՝ հնարավոր սեղմ ժամկետներում եւ ամբողջ ծավալով:

Այլ իրավասու մարմինների կողմից հարցումների կատարման դեպքում Կողմերից յուրաքանչյուրն իր իրավասությունների սահմաններում միջոցներ կձեռնարկի դրանց արագ եւ բազմակողմանի կատարումը կազմակերպելու համար:

Իրավական օգնության վերաբերյալ հարցում ուղարկելու ժամանակ հայցող Կողմը, անհրաժեշտության դեպքում, կարող է մատնանշել այն ժամկետը, որի ավարտից առաջ անհրաժեշտ է ստանալ կատարված հարցման նյութերը, իսկ հայցվող Կողմը միջոցներ է ձեռնարկում հարցման կատարման համար՝ հաշվի առնելով սահմանված ժամկետը:

Հոդված 7

Սահմանված ժամկետում հարցումը կատարելու անհնարինության դեպքում հայցվող Կողմն այդ մասին տեղեկացնում է հայցող Կողմին:

Եթե հարցման կատարումը կապված է մեծ թվով քննչական գործողությունների կատարման եւ զգալի ծավալով փաստաթղթերի ստացման հետ, ապա հայցվող Կողմը հայցող Կողմին է ուղարկում մասնակիորեն կատարված հարցման փաստաթղթերը եւ նյութերը դրանք ստանալուց անմիջապես հետո:

Հոդված 8

Իրավական օգնության վերաբերյալ հարցումները պատրաստելիս Կողմերը միջոցներ են ձեռնարկում այն անձանց անկետային տվյալների, փաստացի բնակության վայրի մասին տվյալների իսկության ստուգման ուղղությամբ, որոնց հետ անհրաժեշտ է կատարել հայցվող դատավարական գործողությունները, եւ ապահովում են հայցվող դատավարական գործողությունների ցանկի եւ բովանդակության հստակ շարադրումը:

Հոդված 9

Եթե հայցող Կողմը հարցեր ունի իրավական օգնության մասին հարցման կազմման վերաբերյալ, ապա մինչեւ ստորագրված հարցումն ուղարկելը կարող է այդ փաստաթղթի

Նախագիծը ֆաքսիմիլային կապի ուղիներով կամ էլեկտրոնային փոստով ուղարկել հայցվող Կողմին՝ դրա ուսումնասիրման եւ շտկման համար:

Հոդված 10

Հայցող Կողմը հարցմանը կից գրության վրա նշում է քրեական գործի համարը, ինչպես նաեւ գրանցման համարը, որին այդ հարցման վերաբերյալ հետագա գրագրության ժամանակ պետք է հղում կատարվի:

Հոդված 11

Իրավական օգնության վերաբերյալ հարցման կատարումն ընդունելիս հայցվող Կողմը ֆաքսիմիլային կապի ուղիներով կամ էլեկտրոնային փոստով տեղեկացնում է հայցող Կողմին հարցումը ստանալու ամսաթվի, կատարման համար հարցումը փոխանցելու ամսաթվի եւ այն մարմնի մասին, որին հանձնարարվել է հարցման կատարումը (անհրաժեշտության դեպքում՝ կապի մեջ մտնող անձի տվյալների մասին):

Այդպիսի հաղորդագրության մեջ պարտադիր պետք է նշված լինի հայցող Կողմի գրանցման համարը եւ հայցվող Կողմի գրանցման համարը:

Հոդված 12

Կողմերն իրենց իրավասությունների սահմաններում աջակցություն կցուցաբերեն իրենց պետությունների իրավապահ մարմինների պաշտոնատար անձանց ժամանմանը իրենց վարույթում գտնվող քրեական գործերով իրավական օգնություն ցուցաբերելու հարցումներով քննչական գործողությունների կատարմանը մասնակցելու համար:

Համագործակցության գործող պրակտիկայի համաձայն՝ քննչական գործողություններին մասնակցելու նպատակով ուղեւորությունների հետ կապված ծախսերն իր վրա է վերցնում գործուղող Կողմը:

Հոդված 13

Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել լրացումներ եւ փոփոխություններ, որոնք ձեւակերպվում են համապատասխան արձանագրություններով, հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը եւ ուժի մեջ են մտնում դրա 15-րդ հոդվածով նախատեսված կարգով:

Սույն Համաձայնագրի մեկնաբանման եւ կիրառման հետ կապված բոլոր հարցերը Կողմերը լուծում են բանակցությունների եւ խորհրդակցությունների միջոցով՝ հարգանքի եւ փոխըմբռնման սկզբունքների հիման վրա:

Հոդված 14

Սույն Համաձայնագրի շրջանակներում համագործակցությունն իրականացվում է քրեական գործերով իրավական օգնություն ցուցաբերելու ոլորտում գործնական որոշումներ փնտրելու Կողմերի ձգտումով, ինչպես նաեւ սույն Համաձայնագրին բնորոշ գործընկերության ոգով:

Հոդված 15

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին վերջին գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով ստանալու օրվանից եւ կնքվում է անորոշ ժամկետով:

Յուրաքանչյուր Կողմ կարող է դադարեցնել սույն Համաձայնագրի գործողությունը մյուս Կողմին դիվանագիտական ուղիներով համապատասխան գրավոր ծանուցում ուղարկելու միջոցով: Այդ դեպքում Համաձայնագրի գործողությունը կդադարի դրա գործողության դադարեցման մասին ծանուցումը մյուս Կողմի ստանալու օրվանից 30 օր

հետո:

Կատարված է Կիել քաղաքում 2008 թ. նոյեմբերի 13-ին երկու բնօրինակով,
յուրաքանչյուրը՝ հայերեն, ուկրաիներեն եւ ռուսերեն, ընդ որում բոլոր տեքստերը
հավասարազոր են: Տարածայնություններ առաջանալու դեպքում առավելություն կունենա
ռուսերեն տեքստը:

Չամաձայնագիրը ուժի մեջ է մտել 2009 թ-ի հուլիսի 8-ին: